

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՎՊՄԻ ՊՈԱԿ)

«Հաստատում եմ»
ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ, պրոֆեսոր
Խաչատրյան Գ. Կ.
_____ 2011թ.
“ _____ ” _____

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Հաստատված է ՎՊՄԻ ՊՈԱԿ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ

“ ”2011 թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Ինստիտուտ) Հենակետային Վարժարանը (այսուհետև՝ Վարժարան) Ինստիտուտի կազմում առանձին ստորաբաժանում է, որն իրականացնում է հանրակրթական ծրագրեր:
2. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Հենակետային Վարժարանը ստեղծվել է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային վարժարան» ՊՈԱԿ-ի՝ գրանցված Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում **երկու հազար երեք թվականի փետրվարի տասին, պետական գրանցման համարը՝ 26.210.02115, պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա 058602, գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վանաձոր, Գր. Լուսավորիչի փողոց, շենք համար քառասունյոթ, «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ին միացման ձևով:**
3. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային վարժարան» ՊՈԱԿ-ի իրավահաջորդն է:
4. Վարժարանն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
5. Վարժարանի կանոնադրությունը Ինստիտուտի կանոնադրության հիման վրա հաստատում է Ինստիտուտի գիտխորհուրդը:
6. Վարժարանն ունի իր անվամբ կնիք, կարող է ունենալ դրոշմակնիք, խորհրդանիշ և ձևաթղթեր:
7. Վարժարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
8. Վարժարանում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:
9. Վարժարանի լրիվ անվանումն է՝
10. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հենակետային վարժարան:
11. Վարժարանի գտնվելու վայրն է՝ ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36, ՎՊՄԻ ՊՈԱԿ:

II. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Վարժարանի գործունեության առարկան և նպատակը հանրակրթական բնույթի գործունեությունն իրականացնելն է:
13. Վարժարանն իրականացնում է ավանդական և այլընտրանքային մանկավարժական մեթոդների զուգորդմամբ հանրակրթական ծրագրեր:
14. Վարժարանի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
15. Վարժարանը պատասխանատու է պետական չափորոշիչներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:
16. Վարժարանը կարող է զբաղվել՝
- 16.1 ՀՀ օրենսդրությամբ և Ինստիտուտի կանոնադրությամբ ու սույն կանոնադրությամբ չարգելվող ձեռնարկատիրական գործունեությամբ.
- ա) հանրակրթական լրացուցիչ ծրագրերի իրականացում,
 - բ) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,
 - գ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,
 - դ) սովորողների սննդի կազմակերպում,
 - ե) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:
- 16.2 Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով՝ միայն լիցենզիայի հիման վրա:

III. ՎԱՐժԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱՎԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

17. Վարժարանը հանրակրթական ծրագրերին համապատասխան, որպես կանոն, կառուցված է ավագ դպրոցից:

18. Վարժարանը կարող է իրականացնել միջին հանրակրթական դպրոցի ծրագրեր, եթե այդ մասին առկա է ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան թույլտվությունը:
19. Վարժարանի ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Վարժարանում, սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան, իրականացվում է տարբերակված (հոսքային) ուսուցում: Վարժարանային կրթությունն ավարտվում է պետական ավարտական քննություններով:
20. Վարժարանում ուսուցման լեզուն գրական հայերենն է:
21. Վարժարան կարող են ընդունվել հանրակրթական հիմնական դպրոցի շրջանավարտները՝ մրցութային հիմունքներով՝ որակավորման ստուգման արդյունքներով:
22. Վարժարանի աշակերտների բուժապասարկումն իրականացնում է առողջապահական մարմինների կողմից ամրակցված բուժանձնակազմը, որը կառավարման մարմինների հետ պատասխանատու է բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման համար:
23. Վարժարանի դասարանի միջին խտությունը ուսպլանի ընդհանուր հանրակրթական առարկաների դասերին սահմանվում է 20-25, իսկ հոսքային ուսուցման դասերին՝ 12-15 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ (ընդ որում՝ ընդհանուր հանրակրթական առարկաների դասերին սովորողների թիվը դասարանում չի կարող գերազանցել 30-ը, իսկ հոսքային ուսուցման առարկաների դասերին՝ 20-ը): Սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:
24. Վարժարանում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Վարժարանում սահմանվում է վեցօրյա ուսումնական շաբաթ՝ ըստ պետական ուսումնական պլանի:
Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է առնվազն 34 շաբաթ:
Վարժարանում կիրառվում է սովորողների գիտելիքների ընթացիկ, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման կարգը:
25. Վարժարանում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է, բացառիկ դեպքերում այն կարող է փոփոխվել Ինստիտուտի կողմից:

26. Վարժարանում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և իր դասացուցակի հիման վրա:
27. Վարժարանի ուսումնական պլաններում առանձին առարկաների հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական տիպային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:
28. Վարժարանն ուսման մեջ բացառիկ հաջողությունների հասած շրջանավարտներին կարող է ներկայացնել ուսման գերազանցության մեդալով պարգևատրման՝ նախարարության սահմանված կարգով: Տարեկան գերազանց առաջադիմություն և լավ վարք, ինչպես նաև առանձին ուսումնական առարկաներից գերազանց առաջադիմություն ունեցող սովորողները նախարարության սահմանած կարգով պարգևատրվում են գովասանագրերով:

IV. ՎԱՐՇԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Վարժարանի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Ինստիտուտի կանոնադրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:
30. Վարժարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ:
31. Համայնքի, ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով Վարժարանում, որպես խորհրդատվական մարմին ձևավորվում է ծնողական խորհուրդ, կարող են ձևավորվել նաև հոգաբարձուների և այլ խորհուրդներ:
32. Վարժարանի անմիջական կառավարումն իրականացնում է տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Ինստիտուտի ռեկտորի կողմից: Տնօրենի ատեստավորման կարգը որոշում է Ինստիտուտը:
33. Վարժարանն իր կազմում կարող է ունենալ ենթաստորաբաժանումներ, լաբորատորիաներ, կաբինետներ, արհեստանոցներ:
34. Վարժարանում գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և Ինստիտուտի հաստատած հրահանգին համապատասխան:

35. Վարժարանի տնօրենը՝

- ա) կազմակերպում և ղեկավարում է Վարժարանի գործունեությունը, գործում է նրա անունից և այն ներկայացնում Ինստիտուտում,
- բ) իրականացնում է վերահսկողություն Վարժարանին հատկացված գույքի ու միջոցների նպատակային օգտագործման համար,
- գ) Ինստիտուտի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Վարժարանի գործունեության ապահովման վերաբերյալ,
- դ) իրականացնում է վերահսկողություն Վարժարանում ուսուցման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ,
- ե) ապահովում է Վարժարանի աշխատակիցների կողմից Ինստիտուտի ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը, ներկայացնում է առաջարկություններ խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցների մասին,
- զ) իր իրավասության սահմաններում տալիս է կարգադրություններ ու հանձնարարություններ, որոնց կատարումը պարտադիր է Վարժարանի աշխատողների և սովորողների համար,
- է) սահմանված կարգով տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Ինստիտուտի գիտխորհրդին,
- ը) իրականացնում է Վարժարանի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

36. Տնօրենի բացակայության ժամանակ, Ինստիտուտի ռեկտորի հրամանով (կարգադրությամբ), նրա պարտականությունները կատարում է տնօրենի տեղակալը:

37. Վարժարանի տնօրենը չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

38. Վարժարանի տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝

- ա) պատասխանատու է վարժարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի համար,
- բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը,

զ) վարժարանում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ,

դ) ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքը, ընդհանրացնում և տարածում լավագույն ուսուցիչների աշխատանքի դրական փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:

39. Վարժարանի կազմակերպիչը՝

ա) կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը,

բ) ապահովում է վարժարանի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը,

գ) կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար,

դ) վարժարանի կազմակերպչի հաստիքի բացակայության դեպքում հոդված 40-ի ա/,բ/,գ/ կետերի պահանջները իրականացնում է վարժարանի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը:

40. Վարժարանի տնտեսվարը՝

ա) պատասխանատու է վարժարանի շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, վարժարանի սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, վարժարանի ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների՝ ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար,

բ) միջոցներ է ձեռնակում վարժարանի ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

41. Դասարանի ղեկավարը (դասղեկը)՝

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,

բ) ապահովում է սովորողների նկատմամբ վարժարանի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը,

զ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,

դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, պարբերաբար վարժարանի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկություններ,

ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,

զ) Վարժարանի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողների հարցը,

է) Արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

V. ՎԱՐՇԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ, ՍՈՎՈՐՈՂԸ ԵՎ ԾՆՈՂԸ

42. Վարժարանում մանկավարժական աշխատանք կարող է կատարել համապատասխան մասնագիտության առնվազն մանկավարժության մագիստրոսի որակավորում ունեցող մասնագետը, Ինստիտուտի աշխատակիցը՝ համատեղության կարգով, բացառիկ դեպքերում՝ ոչ մանկավարժական բարձրագույն կրթություն ունեցող անձը, որի՝ վարժարանում աշխատելու կարգը և պայմանները սահմանում է Ինստիտուտը:

43. Վարժարանի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու վարժարանի կառավարմանը: Վարժարանի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

44. Վարժարանի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

45. Վարժարանի մանկավարժական աշխատողները կարող են ընտրել և կիրառել նախարարության երաշխավորած ուսուցման, ուսումնական նյութերից և ձեռնարկներից որևէ մեկը կամ մի քանիսը:

46. Սովորողն իրավունք ունի՝

ա) Անվճար ստանալու միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,

բ) Անվճար օգտվելու վարժարանի առանձին ծառայություններից,

գ) Վարժարանում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր,

դ) Ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները,

ե) Առանց միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ թողնել ուսումը:

47. Վարժարանում արգելվում է առանց ծնողների և սովորողների համաձայնության սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:

48. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

49. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել վարժարանի գույքին, հարգել վարժարանի սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել վարժարանի կարգապահական կանոնները:

50. Ինստիտուտի (վարժարանի) ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել վարժարանից:

51. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու վարժարանի կառավարմանը:

VI. ՎԱՐՇԱՐԱՆԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

52. Վարժարանը ստեղծվում, գործում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Ինստիտուտի կանոնադրությամբ և իր կանոնադրությամբ համապատասխան:

53. Վարժարանը որպես կանոն, կարող է լուծարվել ուսումնական տարվա վերջում:

